



«Հայփոստ» ՓԲԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2016թ. համար**



Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայփոստ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Մենք իրականացրել ենք «Հայփոստ» ՓԲԸ-ի և վերջինիս դուստր կազմակերպության («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս համախմբված գործունեության արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի *Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի* (ՀԷՄՍԻ օրենսգրք) և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԻ օրենսգրքին համապատասխան:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Հանգամանքների լուսաբանում – Համադրելի տեղեկատվություն

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ին, որտեղ նշվում է, որ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար ներկայացված համադրելի տեղեկատվությունը վերահաշվարկվել է: Մեր եզրակացությունում չի ներկայացվում վերապահում այս հարցի հետ կապված:



«Հայփոստ» ՓԲԸ

Անկախ աուդիտորական եզրակացություն
Էջ 2

Համադրելի տեղեկատվությանը վերաբերող այլ հարց

Խմբի 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվերին ավարտված տարիների համախմբված ֆինանսական հաշվետվությունների (որոնցից վերցվել է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը) աուդիտը, բացառությամբ համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ում նկարագրված ճշգրտումների, իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2016թ. մայիսի 6-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Որպես 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մաս՝ մենք իրականացրել ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ում նկարագրված ճշգրտումների աուդիտը, որոնք կիրառվել են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների և 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տվյալները վերահաշվարկելու համար: Մեզ չի հանձնարարվել իրականացնել խմբի 2015թ. կամ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվերին ավարտված տարիների համախմբված ֆինանսական հաշվետվությունների (որոնք այստեղ ներկայացված չեն) կամ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության աուդիտ, դիտարկում կամ կիրառել որևէ այլ ընթացակարգեր այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հետ կապված՝ բացառությամբ համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ում նշված ճշգրտումների, այդ իսկ պատճառով, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում խմբի նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ում նշված ճշգրտումները տեղին են և կիրառվել են ըստ պատշաճի:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել խումբը, կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական քերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և զնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ խմբի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- զնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման զնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որոնք կարող են լուրջ կասկածներ հարուցել խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:



«Հայփոստ» ՓԲԸ
 Անկախ աուդիտորական եզրակացություն
 էջ 4

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ խմբի կազմի մեջ մտնող կազմակերպություններին կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասաբյան
 Ղեկավար գործընկեր, «Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

KPMG Armenia



«Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
 5 հունիսի 2017թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2016թ.	31 դեկտեմբերի 2015թ.	31 դեկտեմբերի 2014թ.
Ակտիվներ			Վերահաշվարկված	Վերահաշվարկված
Հիմնական միջոցներ	10	16,087,925	13,904,241	14,398,696
Ոչ նյութական ակտիվներ	11	729,944	627,726	303,776
Այլ		-	291	562
Ոչ ընթացիկ ակտիվներ		16,817,869	14,532,258	14,703,034
Պաշարներ	12	335,158	408,010	293,562
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	13	1,700,786	1,530,237	1,584,164
Բանկային ավանդներ	14	-	2,273,866	1,866,231
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	2,040,519	2,380,307	2,484,796
Ընթացիկ ակտիվներ		4,076,463	6,592,420	6,228,753
Ընդամենը ակտիվներ		20,894,332	21,124,678	20,931,787
Սեփական կապիտալ				
Բաժնետիրական կապիտալ		520,993	520,993	520,993
Լրացուցիչ կապիտալ		171,842	171,842	171,842
Փոխարկման պահուստ		18,160	17,189	12,455
Վերագնահատումից արժեքի աճ		9,943,036	7,951,308	8,318,101
Չբաշխված շահույթ		4,119,667	7,089,141	6,520,362
Ընդամենը սեփական կապիտալ	16	14,773,698	15,750,473	15,543,753
Պարտավորություններ				
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	2,453,337	2,002,417	2,122,881
Ոչ ընթացիկ պարտավորություններ		2,453,337	2,002,417	2,122,881
Բանկային օվերդրաֆտներ		44,030	16,858	336
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	18	3,592,516	3,240,515	3,225,562
Ընթացիկ հարկային պարտավորություններ		30,751	114,415	39,255
Ընթացիկ պարտավորություններ		3,667,297	3,371,788	3,265,153
Ընդամենը պարտավորություններ		6,120,634	5,374,205	5,388,034
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		20,894,332	21,124,678	20,931,787

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 45-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2016թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2016թ.	2015թ.
		Վերահաշվարկված	
Հասույթ	5	7,113,546	7,377,161
Վաճառքի ինքնարժեք	6	(6,022,762)	(6,004,349)
Համախառն շահույթ		1,090,784	1,372,812
Այլ եկամուտ	7 (ա)	209,170	133,727
Իրացման ծախսեր		(74,362)	(61,159)
Վարչական ծախսեր	7 (բ)	(1,189,073)	(1,134,112)
Այլ ծախսեր	7 (գ)	(684,994)	(160,218)
Գործառնական գործունեության արդյունքներ		(648,475)	151,050
Ֆինանսական եկամուտ		220,698	244,735
Ֆինանսական ծախսեր		(27,582)	(57,826)
Զուտ ֆինանսական եկամուտ	8	193,116	186,909
(Վնաս)/շահույթ նախքան շահութահարկով հարկումը		(455,359)	337,959
Շահութահարկի գծով ծախս	9	(59,734)	(135,973)
(Վնաս)/շահույթ տարվա համար		(515,093)	201,986
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
<i>Հողվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս</i>			
Հիմնական միջոցների վերագնահատում	9	3,029,184	-
Հարակից շահութահարկ	9	(605,837)	-
		2,423,347	-
<i>Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>			
Արտարժույթի փոխարկման տարբերություններ արտարժույթով գործառնությունների գծով		971	4,734
Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի		2,424,318	4,734
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		1,909,225	206,720

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2017թ. հունիսի 5-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Ավագյան
Գլխավոր տնօրեն



Ելենա Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Փոխարկման պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ. (վերահաշվարկված)	520,993	171,842	12,455	8,318,101	6,520,362	15,543,753
Շահույթ տարվա համար (վերահաշվարկված)	-	-	-	-	201,986	201,986
Այլ համապարփակ եկամուտ տարվա համար						
Արտերկրյա ստորաբաժանումների արտարժույթի փոխարկման տարբերություններ	-	-	4,734	-	-	4,734
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	4,734	-	-	4,734
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	4,734	-	201,986	206,720
Փոխանցում վերագնահատումից արժեքի աճի կազմից չբաշխված շահույթ	-	-	-	(366,793)	366,793	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ. (վերահաշվարկված)	520,993	171,842	17,189	7,951,308	7,089,141	15,750,473
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ. Վնաս տարվա համար	520,993	171,842	17,189	7,951,308	7,089,141	15,750,473
Այլ համապարփակ եկամուտ համար						
Հիմնական միջոցների վերագնահատում՝ առանց շահութահարկի	-	-	-	2,423,347	-	2,423,347
Արտերկրյա ստորաբաժանումների արտարժույթի փոխարկման տարբերություններ	-	-	971	-	-	971
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	971	2,423,347	-	2,424,318
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	971	2,423,347	(515,093)	1,909,225
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ Ներդրումներ և հատկացումներ						
Շահաբաժիններ	-	-	-	-	(2,886,000)	(2,886,000)
Ընդամենը ներդրումներ և հատկացումներ	-	-	-	-	(2,886,000)	(2,886,000)
Փոխանցում վերագնահատումից արժեքի աճի կազմից չբաշխված շահույթ	-	-	-	(431,619)	431,619	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	520,993	171,842	18,160	9,943,036	4,119,667	14,773,698

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 45-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:



հազ. դրամ	Ծնթգ.	2016թ.	2015թ.
			Վերահաշվարկված
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
(Վնաս)/շահույթ տարվա համար		(515,093)	201,986
<i>Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով.</i>			
Մաշվածություն և ամորտիզացիա		875,886	988,283
Արժեզրկումից կորուստներ հիմնական միջոցների գծով, զուտ Օգուտ/(վնաս) հիմնական միջոցների օտարումից		535,262	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ		(936)	546
		16,758	103,505
Արձակուրդային վճարումների գծով պահուստի հաշվեգրում		3,664	73,017
Չուտ ֆինանսական եկամուտ	8	(193,116)	(186,909)
Շահութահարկի գծով ծախս	9	59,734	135,973
<i>Փոփոխություններ հետևյալ հոդվածների գծով.</i>			
Պաշարներ		72,852	(114,448)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		(217,211)	(65,572)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		(190,734)	(42,585)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը		447,066	1,093,796
Վճարված շահութահարկ		(298,315)	(181,277)
Վճարված տոկոսներ		(10,238)	-
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր		138,513	912,519
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից		950	7,121
Մուտքեր բանկային ավանդումներից		2,214,456	-
Բանկային ավանդների տեղաբաշխում		-	(408,438)
Հիմնական միջոցների ձեռքբերում		(548,047)	(477,640)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(143,368)	(347,588)
Ստացված տոկոսներ		255,702	243,302
Ներդրումային գործունեությունից ստացված/ներդրումային գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր		1,779,693	(983,243)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր փոխառություններից		26,232	24,947
Վճարված շահաբաժիններ		(2,309,000)	-
Ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված)/ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր		(2,282,768)	24,947
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		(364,562)	(45,777)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ		2,380,307	2,484,796
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		24,774	(58,712)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ	15	2,040,519	2,380,307

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 11-ից 45-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծանոթագրություն	Էջ
1. Հաշվետու կազմակերպություն	12
2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ	12
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	13
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում	13
5. Հասույթ	15
6. Վաճառքի ինքնարժեք	15
7. Եկամուտ և ծախսեր	15
8. Զուտ ֆինանսական եկամուտ	16
9. Շահութահարկ	17
10. Հիմնական միջոցներ	20
11. Ոչ նյութական ակտիվներ	22
12. Պաշարներ	22
13. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	23
14. Բանկային ավանդներ	23
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24
16. Կապիտալ և պահուստներ	24
17. Կապիտալի կառավարում	25
18. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	26
19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	26
20. Պայմանական դեպքեր	33
21. Մնացորդներ կապակցված կողմերի հետ	34
22. Նշանակալից դուստր կազմակերպություններ	34
23. Չափման հիմունքներ	34
24. Անճշտության ուղղում	35
25. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	36
26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	44

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Հայփոստ» ՓԲԸ-ն («Ընկերություն») Հայաստանի Հանրապետությունում գրանցված փակ բաժնետիրական ընկերություն է: «Հայփոստ» ՓԲԸ-ն և վերջինիս դուստր կազմակերպությունը («Խումբ») հանդիսանում են փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն, և արտերկրում գտնվող ընկերություն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Սարյանի փ. 22:

Ընկերությունը հանդիսանում է փոստային կապի ազգային օպերատորը: Ընկերության գործունեությունը կարգավորում են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը և ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Ընկերության հիմնական ծառայություններն են սովորական և էքսպրես նամակների ու ծանրոցների ընդունումը, փոխադրումը և առաքումը, միջնորդային ծառայությունները, ներառյալ՝ սոցիալական վճարների վճարումը և թռչակների բաժանումը, կոմունալ վճարների, ոստիկանության վճարների և հարկերի հավաքագրումը:

Ընկերության միակ սեփականատերն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության:

2006թ-ին մայր կազմակերպության կառավարման գործառույթները փոխանցվել են «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին («Հավատարմագրային կառավարիչ»)՝ ՀՀ կառավարության և Հավատարմագրային կառավարչի միջև ստորագրված պայմանագրի համաձայն:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Խմբի ֆունկցիոնալ արժույթը և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Ներկայացման արժույթից տարբեր ֆունկցիոնալ արժույթ ունեցող դուստր կազմակերպության գործունեության արդյունքները և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տվյալները փոխարկվել են ներկայացման արժույթի՝ կիրառելով հետևյալ ընթացակարգերը.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆինանսական վիճակի մասին այդ հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փակման փոխարժեքով,
- համապարփակ ֆինանսական արդյունքների մասին յուրաքանչյուր հաշվետվության եկամուտները և ծախսերը փոխարկվում են գործարքների ամսաթվերի դրությամբ գործող փոխարժեքներով և
- արդյունքում առաջացող բոլոր փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթների կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 25 (ը) *Հիմնական միջոցներ* – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ,
- Ծանոթագրություն 10 (ա) – հիմնական միջոցների վերագնահատում,
- Ծանոթագրություն 19 (բ) – առևտրական դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստ:

Իրական արժեքի չափում

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Խումբը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև իրականացվող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 10 – հիմնական միջոցներ և,
- Ծանոթագրություն 19 – իրական արժեք և ռիսկերի կառավարում:

5. Հասույթ

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Փոստային առաքման ծառայություններ	3,264,434	3,349,822
Միջնորդավճարներ կենսաթոշակների և այլ հատուցումների փոխանցումից	2,001,031	2,195,288
Միջնորդավճարներ կոմունալ ծառայությունների և այլ վճարներից	1,626,493	1,594,510
Այլ հասույթ	221,588	237,541
Ընդամենը հասույթ	7,113,546	7,377,161

6. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Աշխատավարձ	3,659,164	3,608,114
Մաշվածություն և ամորտիզացիա	787,876	823,718
Ծառայություններ	507,112	502,387
Նյութեր	319,878	329,759
Փոստային առաքման ծառայությունների վճարներ	293,098	352,861
Գրասենյակային ծախսեր	265,682	251,760
Այլ	189,952	135,750
	6,022,762	6,004,349

7. Եկամուտ և ծախսեր

(ա) Այլ եկամուտ

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Վարձակալություն	99,187	103,463
Եկամուտ հիմնական միջոցների վերագնահատումից	62,809	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	17,645	-
Այլ	29,529	30,264
	209,170	133,727

(բ) Վարչական ծախսեր

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Աշխատավարձ	649,510	603,348
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	217,419	180,723
Մաշվածություն և ամորտիզացիա	88,010	164,565
Մասնագիտական ծառայություններ	45,456	13,716
Վարձակալություն	45,230	44,620
Գործուղման ծախսեր	30,484	25,684
Բանկային ծառայությունների վճարներ	18,091	17,310
Այլ	94,873	84,146
	1,189,073	1,134,112

(գ) Այլ ծախսեր

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Հիմնական միջոցների արժեզրկում	598,071	-
Նվիրատվություններ	40,534	34,127
Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ	16,758	103,505
Այլ	29,631	22,586
	684,994	160,218

8. Չուտ ֆինանսական եկամուտ

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Տոկոսային եկամուտ		
- ընթացիկ հաշիվների գծով	112,894	113,758
- բանկային ավանդների գծով	107,804	130,977
Ֆինանսական եկամուտ	220,698	244,735
Տոկոսային ծախս ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով	(4,820)	-
Չուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(22,762)	(57,826)
Ֆինանսական ծախսեր	(27,582)	(57,826)
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր	193,116	186,909

9. Շահութահարկ

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խմբի գործունեության նկատմամբ կիրառելի շահութահարկի դրույքը կազմում է 20% (2015թ-ին՝ 20%):

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	214,651	245,508
Նախորդ տարիներում պակաս հաշվարկված հարկի գումար	-	10,929
Հետաձգված հարկի գծով հատուցում		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(154,917)	(120,464)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	59,734	135,973

(բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

հազ. դրամ	2016թ.			2015թ.		
	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո
Հիմնական միջոցների վերագնահատում	3,029,184	(605,837)	2,423,347	-	-	-
	3,029,184	(605,837)	2,423,347	-	-	-

Գործող հարկային դրույքի համադրում

	2016թ.		2015թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
(Վնաս)/շահույթ՝ նախքան շահութահարկով հարկումը	(455,359)	100.0%	337,959	100.0%
Շահութահարկը՝ կիրառելի հարկային դրույքով	(91,072)	20.0%	67,592	20.0%
Նախորդ տարիներում պակաս հաշվարկված հարկի գումար	-	-	10,929	3.2%
Չնվազեցվող ծախսեր	150,806	(33.1)%	57,452	17.0%
	59,734	(13.1)%	135,973	40.2%

(գ) Ծանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին.

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.
				Վերահաշ-վարկված		Վերահաշ-վարկված
Հիմնական միջոցներ	-	-	2,508,503	2,071,469	2,508,503	2,071,469
Ոչ նյութական ակտիվներ	-	-	25,555	1,167	25,555	1,167
Պաշարներ	(3,591)	(3,591)	-	-	(3,591)	(3,591)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(53,452)	(49,163)	-	-	(53,452)	(49,163)
Շնորհված ակտիվներ	-	-	170,356	175,836	170,356	175,836
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(194,034)	(193,301)	-	-	(194,034)	(193,301)
Զուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	(251,077)	(246,055)	2,704,414	2,248,472	2,453,337	2,002,417

(դ) Հետաձգված հարկի մնացորդների շարժ

հազ. դրամ	1 հունվարի 2016թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2016թ.
		Վերահաշվարկված		
Հիմնական միջոցներ	2,071,469	(168,803)	605,837	2,508,503
Ոչ նյութական ակտիվներ	1,167	24,388	-	25,555
Պաշարներ	(3,591)	-	-	(3,591)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(49,163)	(4,289)	-	(53,452)
Շնորհված ակտիվներ	175,836	(5,480)	-	170,356
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(193,301)	(733)	-	(194,034)
	2,002,417	(154,917)	605,837	2,453,337

հազ. դրամ	1 հունվարի 2015թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2015թ.
	Վերահաշվարկված		Վերահաշվարկված
Հիմնական միջոցներ	2,139,435	(67,966)	2,071,469
Ոչ նյութական ակտիվներ	6,476	(5,309)	1,167
Պաշարներ	(3,591)	-	(3,591)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(28,795)	(20,368)	(49,163)
Շնորհված ակտիվներ	188,054	(12,218)	175,836
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(178,698)	(14,603)	(193,301)
	2,122,881	(120,464)	2,002,417

10. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հոդ և շենքեր	Մեքենա- սարքավորումներ և փոխադրամիջոցներ	Տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք/Վերագնահատված արժեք				
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	14,065,103	1,527,434	517,969	16,110,506
Ավելացումներ	134,079	257,844	85,717	477,640
Օտարումներ	(952)	(24,455)	(2,980)	(28,387)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	14,198,230	1,760,823	600,706	16,559,759
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	14,198,230	1,760,823	600,706	16,559,759
Ավելացումներ	114,745	353,161	80,141	548,047
Օտարումներ	(24,686)	(2,243)	-	(26,929)
Կուտակված մաշվածության բացառում	(2,051,615)	(947,241)	(317,292)	(3,316,148)
Վերագնահատում	1,999,613	440,447	53,862	2,493,922
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	14,236,287	1,604,947	417,417	16,258,651
Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ				
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	(1,236,490)	(342,830)	(132,490)	(1,711,810)
Տարվա մաշվածություն	(461,591)	(393,361)	(111,965)	(966,917)
Օտարումներ	-	23,186	23	23,209
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	(1,698,081)	(713,005)	(244,432)	(2,655,518)
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	(1,698,081)	(713,005)	(244,432)	(2,655,518)
Տարվա մաշվածություն	(415,194)	(312,428)	(107,114)	(834,736)
Օտարումներ	1,149	2,231	-	3,380
Կուտակված մաշվածության բացառում	2,051,615	947,241	317,292	3,316,148
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	(60,511)	(75,961)	(34,254)	(170,726)
Հաշվեկշռային արժեք				
Առ 1 հունվարի 2015թ.	12,828,613	1,184,604	385,479	14,398,696
Առ 31 դեկտեմբերի 2015թ.	12,500,149	1,047,818	356,274	13,904,241
Առ 31 դեկտեմբերի 2016թ.	14,175,776	1,528,986	383,163	16,087,925
Հաշվեկշռային արժեքը, եթե վերագնահատում չիրականացվեր				
Առ 1 հունվարի 2015թ.	3,806,337	1,513,650	572,331	5,892,318
Առ 31 դեկտեմբերի 2015թ.	3,939,472	1,747,041	655,072	6,341,585
Առ 31 դեկտեմբերի 2016թ.	4,029,539	2,097,961	735,217	6,862,717

746,726 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը ճանաչվել է վաճառքի ինքնարժեքի կազմում և 88,010 հազար դրամ գումարով՝ վարչական ծախսերի կազմում:

(ա) Վերագնահատում

2016թ-ին ղեկավարությունը հանձնարարել է «Անտ Ռ-իելթի» ՍՊԸ-ին իրականացնել հիմնական միջոցների անկախ գնահատում 2016թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ, որոնք, Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն, չափվում են վերագնահատված արժեքով:

Գնահատումն իրականացվել է հետևյալ մոտեցումների համակցությամբ.

- շուկայական մոտեցում – հիմնված է նմանատիպ ակտիվների համադրելի վաճառքների տվյալների կամ առաջադրվող գների վրա, ճշգրտելով արժեքները մինչև 20% չափով՝ գտնվելու վայրի և վիճակի հետ կապված,
- եկամտային մոտեցում – հիմնված է նմանատիպ գույքի վարձակալությունից ակնկալվող եկամտի և 15% կապիտալացման դրույքի վրա:

Հիմնական միջոցների իրական արժեքը կազմել է 16,031,226 հազար դրամ, որը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները (ծանոթագրություն 4):

Վերագնահատումից արժեքի նվազման արդյունքում շահույթում կամ վնասում ճանաչվել է 598,071 հազար դրամ գումարով արժեզրկումից կորուստ հիմնական միջոցների գծով:

11. Ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և ապրանքային նշաններ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	324,005	4,937	328,942
Ավելացումներ	345,879	1,709	347,588
Օտարումներ	(2,272)	-	(2,272)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	667,612	6,646	674,258
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	667,612	6,646	674,258
Ավելացումներ	143,368	-	143,368
Փոխանցումներ	1,656	(1,656)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	812,636	4,990	817,626
Ամորտիզացիա և արժեզրկումից կորուստներ			
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	(22,163)	(3,003)	(25,166)
Տարվա ամորտիզացիա	(19,379)	(1,987)	(21,366)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	(41,542)	(4,990)	(46,532)
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	(41,542)	(4,990)	(46,532)
Տարվա ամորտիզացիա	(41,150)	-	(41,150)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	(82,692)	(4,990)	(87,682)
Հաշվեկշռային արժեք			
Առ 1 հունվարի 2015թ.	301,842	1,934	303,776
Առ 31 դեկտեմբերի 2015թ.	626,070	1,656	627,726
Առ 31 դեկտեմբերի 2016թ.	729,944	-	729,944

12. Պաշարներ

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Նյութեր	170,892	210,877
Նամականիշներ, ծրարներ և փոստային բացիկներ	97,836	186,474
Այլ	66,430	10,659
	335,158	408,010

13. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2016թ.	2015թ.
		Վերահաշվարկված
Առևտրական դեբիտորական պարտքեր միջազգային փոստային ծառայությունների գծով	1,015,971	955,042
Առևտրական դեբիտորական պարտքեր միջնորդային և այլ ծառայությունների գծով	514,306	366,695
Փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասում ներառված առևտրական դեբիտորական պարտքերում	1,530,277	1,321,737
Տրված կանխավճարներ	95,758	125,526
Ստացվելիք այլ հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	48,000	35,180
Այլ	26,751	47,794
	1,700,786	1,530,237

Խմբի ենթարկվածությունը պարտքային և արտարժույթի ռիսկերին առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված ու վերջիններիս գծով արժեզրկման կորուստները ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

14. Բանկային ավանդներ

Ստորև ներկայացված են չմարված բանկային ավանդների համար գործող պայմանները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Արժույթ	Անվանական տոկոսադրույթ	Մարման տարին	Անվանական արժեք	Հաշվեկշռային արժեք
10 խոշորագույն հայկական բանկեր	ԱՄՆ դոլար	6.75%	2016	1,266,118	1,266,118
10 խոշորագույն հայկական բանկեր	Եվրո	4.50%	2016	481,746	481,746
10 խոշորագույն հայկական բանկեր	ԱՄՆ դոլար	7.00%	2016	500,775	500,775
10 խոշորագույն հայկական բանկեր	ԱՄՆ դոլար	7.50%	2016	25,227	25,227
Ընդամենը				2,273,866	2,273,866

Խմբի ենթարկվածությունը տոկոսադրույթի ռիսկին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգալունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2016թ.	2015թ.
		Վերահաշվարկված
Կանխիկը դրամարկղում	26,101	173,452
Բանկային հաշիվների մնացորդներ	1,779,507	2,039,029
Կանխիկը ճանապարհին	234,911	167,826
	2,040,519	2,380,307

Խմբի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների գգայունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

16. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջովին վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 9,542 սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 54,600 դրամ անվանական արժեքով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը հավասար իրավունքներ ունեն Խմբի մնացորդային ակտիվների նկատմամբ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ ժամանակ առ ժամանակ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Խմբի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Խմբի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Խմբի ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով՝ բացառությամբ չբաշխված շահույթի գծով գործող ստորև ներկայացված սահմանափակումների:

Օրենսդրական պահանջների և Խմբի կանոնադրության համաձայն՝ Խումբն իր չբաշխված շահույթից պետք է ստեղծի բաշխման ոչ ենթակա պահուստ՝ բաժնետիրական կապիտալի 15%-ին հավասար գումարի չափով՝ ապագա վնասները ծածկելու նպատակով (78,149 հազար դրամ՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

2016թ-ին Խումբը հայտարարել է 2,886,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ կամ 302.45 հազար դրամ գումարով շահաբաժին մեկ բաժնետոմսի համար (2015թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել):

(գ) Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալը վերաբերում է 171,842 հազար դրամ գումարով հատկացմանը, որը կատարվել է 2004թ-ին ՀՀ կառավարությունից ակտիվները ստանալուց հետո:

(դ) Փոխարկման պահուստ

Փոխարկման պահուստը ներառում է արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների տվյալների փոխարկման արդյունքում առաջացող բոլոր փոխարժեքային տարբերությունները:

(ե) Վերագնահատումից աճ

Վերագնահատումից արժեքի աճը վերաբերում է հիմնական միջոցների վերագնահատմանը:

17. Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարումը կարգավորող ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Խմբի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա կարելի է իրագործել դրամական միջոցների արդյունավետ կառավարման ու Խմբի հասույթի և շահույթի շարունակական վերահսկման միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը՝ Խումբը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Ստորև ներկայացված է Խմբի զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը ղեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Ընդամենը պարտավորություններ	6,120,634	5,374,205
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	2,040,519	2,380,307
Զուտ պարտքը	8,161,153	7,754,512
Ընդամենը սեփական կապիտալ	14,773,698	15,706,512
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը ղեկտեմբերի 31-ի դրությամբ	0.55	0.49

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Խմբի մոտեցումը չի փոփոխվել:

Խմբի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին կանոնակարգող մարմինների պահանջներ:

18. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2016թ.	2015թ.
		Վերահաշվարկված
Հաճախորդներից հավաքագրված վճարների գծով վճարվելիք գումարներ	1,208,377	1,183,372
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	981,122	1,025,783
Վճարման ենթակա աղբյուրի մոտ գանձվող հարկ	596,382	76,399
Այլ վճարվելիք հարկեր	187,964	241,166
Առևտրական կրեդիտորական պարտքեր միջազգային փոստային ծառայությունների գծով	98,785	252,169
Ստացված կանխավճարներ	14,283	22,962
Այլ առևտրական կրեդիտորական պարտքեր	434,289	374,293
Այլ կրեդիտորական պարտքեր	71,314	64,371
	3,592,516	3,240,515

Խմբի ենթարկվածությունն արտարժույթի և իրացվելիության ռիսկերին առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 19-ում:

19. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր հաշվետվություններ է ներկայացնում Դիտորդ խորհրդին իր գործունեության վերաբերյալ:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակներն ու դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանները և Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված

ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում կունենան իրենց դերերի և պարտականությունների մասին:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Խմբի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերից:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածությունը առավելագույն չափը:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2016թ.	2015թ.
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	1,700,786	1,530,237
Բանկային ավանդներ	-	2,273,866
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,014,418	2,206,855
	3,715,204	6,010,958

Առևտրական դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի առանձնահատկություններից: Խմբում չի կիրառվում ձևակերպված քաղաքականություն, որը կպահանջեր ցանկացած նոր հաճախորդի վճարունակության գնահատման իրականացում: Խումբը չի պահանջում գրավ առևտրական դեբիտորական պարտքերի գծով, ինչպես նաև կանխավճար՝ վաճառքն իրականացնելուց առաջ:

Հաճախորդների ավելի քան 60%-ի հետ Խումբը գործարքներ է իրականացնում ավելի քան հինգ տարի և հազվադեպ է վնաս կրել այդ գործարքներից: Հաճախորդների հետ կապված պարտքային ռիսկը վերահսկելիս՝ հաճախորդները խմբավորվում են ըստ պատրքային առանձնահատկությունների՝ ըստ անհատ կամ իրավաբանական անձ դասակարգման, աշխարհագրական տարածաշրջանի, գործունեության ճյուղը, պարտքերի ժամկետայնության և նախկինում ֆինանսական բարդությունների առկայությունը:

Խումբը ձևավորում է արժեզրկման գծով պահուստ, որն իրենից ներկայացնում է առևտրական դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների Խմբի գնահատականը: Այս պահուստի հիմնական տարրը հավաքական վնասի տարրն է, որը սահմանվում է նմանատիպ ակտիվների խմբերի համար՝ կրած, սակայն դեռևս չբացահայտված վնասի հետ կապված: Հավաքական վնասի գծով պահուստը որոշվում է նմանատիպ ֆինանսական ակտիվների գծով կատարած վճարումների վերաբերյալ նախկին տարիների վիճակագրական տվյալների հիման վրա:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ ըստ աշխարհագրական տարածաշրջանի:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2016թ.	2015թ.
Արևելյան Ասիայի երկրներ	624,383	371,950
Հայաստանի Հանրապետություն	514,306	598,748
Եվրոպայի գոտու երկրներ	148,478	158,715
Այլ ԱՊՀ երկրներ	72,836	57,482
Միջին Արևելքի երկրներ	5,126	29,556
Այլ ԱՊՀ երկրներ	165,148	105,286
	1,530,277	1,321,737

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ ըստ հաճախորդների տեսակների:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2016թ.	2015թ.
Միջազգային փոստային օպերատորներ	1,015,971	955,042
Այլ	514,306	366,695
	1,530,277	1,321,737

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ երկու պայմանագրային կողմ (2015թ-ին՝ մեկ պայմանագրային կողմ), որոնց մնացորդները գերազանցում էին ընդհանուր առևտրական դեբիտորական պարտքերի մնացորդի 10%-ը: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 788,168 հազար դրամ (2015թ-ին՝ 566,742 հազար դրամ):

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ չարժեզրկված առևտրական դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը:

հազ. դրամ	2016թ.		2015թ.	
	Համախառն գումար	Արժեզրկում	Համախառն գումար	Արժեզրկում
Ոչ ժամկետանց	1,470,040	-	1,275,685	-
0- 30 օր ժամկետանց	10,824	-	8,707	-
31-120 օր ժամկետանց	13,088	-	5,985	-
121-180 օր ժամկետանց	5,410	-	3,623	-
181-365 օր ժամկետանց	11,846	-	4,999	-
Ավելի քան 365 օր ժամկետանց	254,516	235,447	241,427	218,689
	1,765,724	235,447	1,540,426	218,689

Հիմք ընդունելով նախորդ ժամանակաշրջանների պարտավորությունների չկատարման արձանագրված տվյալները՝ Խումբը գտնում է, որ անհրաժեշտ չէ ձևավորել արժեզրկման գծով պահուստ ոչ ժամկետանց կամ մինչև 30 օր ժամկետանց առևտրական դեբիտորական պարտքերի համար: Ավելի քան 30 օր ժամկետանց առևտրական դեբիտորական պարտքերի համար Խումբն իրականացնում է արժեզրկման գնահատում առանձին հիմունքով:

Ստորև ներկայացված է առևտրական դեբիտորական պարքերի գծով արժեզրկման պահուստի շարժը տարվա ընթացքում:

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	218,689	115,184
Ճանաչված արժեզրկումից կորուստ	21,538	103,505
Նվազում հակադարձման արդյունքում	(4,780)	-
Մնացորդը տարեվեջի դրությամբ	235,447	218,689

Առևտրական դեբիտորական պարքերի գծով պահուստային հաշիվներն օգտագործվում են արժեզրկումից կորուստները գրանցելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը հավաստիանում է, որ պարտքի վերադարձը հնարավոր չէ: Այդ դեպքում գումարները համարվում են անվերադարձելի և դուրս են գրվում ուղղակիորեն ֆինանսական ակտիվի դիմաց: Խումբը դուրս է գրում ավելի քան մեկ տարի ժամկետանց պարտքերը:

Առևտրական դեբիտորական պարքերի գծով հավաքական արժեզրկումն Խումբը գնահատում է՝ ելնելով հաճախորդի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձից: Առևտրական դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը գնահատելիս ղեկավարությունն առաջնորդվում է այն հիմնական ենթադրությամբ, որ վճարման պայմանները անփոփոխ են և կարող են գնահատվել վերջին մեկ տարվա ընթացքում կրած վնասի շարժի մոդելի հիման վրա:

Եթե նախկինում գործող դրույքների հիման վրա գնահատված դրամական միջոցների հոսքերի գուտ ներկա արժեքը փոփոխվի երեք տոկոսով, ապա առևտրական դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կաճի 45,908 հազար դրամով (2015թ-ին կնվազի/կաճի 39,652 հազար դրամով):

Դրամական միջոցների համարժեքներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի 2,014,418 հազար դրամ (2015թ-ին՝ 2,206,855 հազար դրամ) գումարով կանխիկ ճանապարհին և բանկային հաշիվների մնացորդներ, որն իրենից նեկայացնում է առավել ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների գծով: Կանխիկը և բանկային հաշիվների մնացորդները պահվում են խոշոր հայկական բանկերում և վճարային կազմակերպություններում, և Խումբը չի ակնկալում պայմանագրային պարտականությունների չկատարում այս պայմանագրային կողմերի կողմից:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Ընկերությունն ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

Բացի այդ, Խումբն ունի հետևյալ վարկային գիծը.

- Գրավով ապահովված վարկային գիծ 400,000 հազար դրամի չափով: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկային գծի չօգտագործված մասը կազմում էր 400,000 հազար դրամ:

Ենթարկվածությունն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չգեղջված գումարները:

31 դեկտեմբերի 2016թ.

հազ. դրամ	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր							
	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը	Ցպահանջ	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ								
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	2,793,887	2,793,887	-	1,627,603	1,166,284	-	-	-
Բանկային օվերդրաֆտներ	44,030	44,030	44,030	-	-	-	-	-
	2,837,917	2,837,917	44,030	1,627,603	1,166,284	-	-	-

31 դեկտեմբերի 2015թ.

հազ. դրամ	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր							
	Հաշվեկշռ. արժեք	Ընդամենը	Ցպահանջ	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ								
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	2,899,988	2,899,988	-	1,846,275	1,053,713	-	-	-
Բանկային օվերդրաֆտներ	16,858	16,858	16,858	-	-	-	-	-
	2,916,846	2,916,846	16,858	1,846,275	1,053,713	-	-	-

Չի ակնկալվում, որ վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Խումբը չի կիրառում հեջի հաշվառում՝ շահույթի կամ վնասի տատանումները կառավարելու համար:

Արտարժույթի ռիսկ

Խումբը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով չեն համապատասխանում այն արժույթները, որոնցով արտահայտված են վաճառքները, գնումները, և փոխառությունները, և Խմբի ընկերությունների համապատասխան ֆունկցիոնալ արժույթները: Նշված գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով, եվրոյով և հատուկ փոխանակման իրավունքով (ՀՓԻ):

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտ- ված 2016թ.	Եվրոյով արտահայտ- ված 2016թ.	ՀՓԻ արտահայտ- ված 2016թ.	ԱՄՆ դոլարով արտահայտ- ված 2015թ.	Եվրոյով արտահայտ- ված 2015թ.	ՀՓԻ արտահայտ- ված 2015թ.
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	61,725	91,088	975,204	3,853	47,242	926,864
Բանկային ավանդներ	-	-	-	1,792,120	481,746	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	830,783	88,300	-	477,380	534,499	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(62,816)	(22,228)	(114,428)	(32,309)	(8,925)	(289,297)
Զուտ ենթարկվածություն	829,692	157,160	860,776	2,241,044	1,054,562	637,567

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.
1 ԱՄՆ դոլար	480.32	477.95	483.94	483.75
1 եվրո	531.89	529.39	512.20	528.69
1 հատուկ փոխանակման իրավունք	667.88	668.38	650.58	671.95

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամիտ հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի, եվրոյի, հատուկ փոխանակման իրավունքի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և շահույթի կամ վնասի (առանց հարկերի) վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

հազ. դրամ	Արժևորում		Արժեզրկում	
	Շահույթ վնաս	կամ	Շահույթ կամ վնաս	կամ
31 դեկտեմբերի 2016թ.				
ՀՀ դրամի 10% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ		82,969		(82,969)
ՀՀ դրամի 10% շարժ եվրոյի նկատմամբ		15,716		(15,716)
ՀՀ դրամի 10% շարժ ՀՓԻ նկատմամբ		86,078		(86,078)
31 դեկտեմբերի 2015թ.				
ՀՀ դրամի 10% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ		224,104		(224,104)
ՀՀ դրամի 10% շարժ եվրոյի նկատմամբ		105,456		(105,456)
ՀՀ դրամի 10% շարժ ՀՓԻ նկատմամբ		63,757		(63,757)

(v) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Դեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում դեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2016թ.	2015թ.
Ֆիքսված դրույքով գործիքներ		
Ֆինանսական ակտիվներ	-	2,273,866
Ֆինանսական պարտավորություններ	(44,030)	(16,858)
	(44,030)	2,257,008

Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված դրույքով գործիքների համար

Խումբը չի հաշվառում ֆիքսված դրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

20. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր բոլոր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Ղեկավարության կարծիքով ներկա պահին չկան հարուցված այնպիսի դատական վարույթներ կամ հայցեր, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

(գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

21. Մնացորդներ կապակցված կողմերի հետ

(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում (ծանոթագրություն 7 (բ)):

հազ. դրամ	2016թ.	2015թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	91,498	79,802

(ii) Գրանական միջոցներ և դրանց համարժեքներ և բանկային ավանդներ

հազ. դրամ	Տոկոսային եկամուտ		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2016թ.	2015թ.	31 դեկտեմբերի 2016թ.	31 դեկտեմբերի 2015թ.
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	220,209	242,645	-	2,248,639

22. Նշանակալից դուստր կազմակերպություններ

Դուստր կազմակերպություն	Գրանցման երկիրը	2016թ.	2015
		Մեփականություն/ քվեարկելու իրավունք	Մեփականություն/ քվեարկելու իրավունք
«Հայփոստ ԱՄՆ Կորպ.»	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	100%	100%

23. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով:

24. Անճշտության ուղղում

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նշված ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս դեկավարությունը հայտնաբերել է որոշ անճշտություն հետևյալ հարցերի հետ կապված.

- *Ակտիվներին վերաբերող շնորհներ.* 1996թ-ին, ՀՀ կառավարության որոշման համաձայն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից զբաղեցրած բոլոր փոստային գրասենյակները և տարածքներն անվերապահորեն փոխանցվել են Խմբին: Խումբը ճանաչել է ակտիվներին վերաբերող շնորհ՝ հողը և շենքերը ստանալուց հետո ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում անմիջապես օգուտ ճանաչելու փոխարեն: Ղեկավարությունը վերահաշվարկել է համապատասխան տվյալները՝ ակտիվներին վերաբերող շնորհի ընդհանուր մնացորդը չբաշխված շահույթում ճանաչելու համար: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ուղղումն ազդել է ակտիվներին վերաբերող շնորհի հաշվեկշռային արժեքի վրա՝ 879,179 հազար դրամի չափով (940,270 հազար դրամի չափով՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ), չբաշխված շահույթի վրա՝ 703,343 հազար դրամի չափով (752,216 հազար դրամի չափով՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) և հետաձգված հարկային պարտավորությունների վրա՝ 175,836 հազար դրամի չափով (188,054 հազար դրամի չափով՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) (ծանոթագրություն 9 (դ)):
- *Հաճախորդներից հավաքագրված վճարների գծով վճարվելիք գումարներ.* 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կոմունալ ծառայությունների համար հաճախորդներից հավաքագրված վճարների գծով վճարվելիք գումարները հաշվանցվել են դրամական միջոցների և դրանց համարժեքների հետ: Ղեկավարությունը վերահաշվարկել է համադրելի տվյալները, համապատասխան մնացորդները համախառն հիմունքով ներկայացնելու համար, քանի որ դրանք չէին բավարարում հաշվանցման չափանիշները: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ուղղումն ազդել է դրամական միջոցների և դրանց համարժեքների և առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքի վրա՝ 1,147,469 հազար դրամի չափով (1,100,873 հազար դրամի չափով՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ): Բացի այդ, դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի և սկզբի դրությամբ վերաներկայացվել են 2015թ. դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում:
- *Առևտրական դեբիտորական պարտքեր միջազգային փոստային ծառայությունների գծով.* Մեկ պայամանագրային կողմի դեբիտորական պարտքը ճշգրիտ չէր ներկայացվել 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, քանի որ համապատասխան հասույթը չէր արտացոլվել ճիշտ ժամանակաշրջանում: Ղեկավարությունը վերահաշվարկել է համադրելի տվյալները՝ ճանաչելով նշված պայամանագրային կողմի հասույթը համապատասխան ժամանակաշրջանում: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ուղղումն ազդել է առևտրական դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքի վրա՝ 253,832 հազար դրամի չափով, հասույթի վրա՝ 93,555 հազար դրամի չափով և չբաշխված շահույթի վրա՝ 160,277 հազար դրամի չափով (160,277 հազար դրամի չափով՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

Բացի վերը նշվածից, ղեկավարությունն ուղղումներ է կատարել նաև համադրելի տեղեկատվությունում բացահայտված այլ անճշտությունների գծով:

25. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև բերվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար և Խմբի բոլոր անդամ ընկերությունների կողմից:

Որոշ համադրելի տվյալներ վերադասակարգվել են՝ հաշվետու տարվա ներկայացման հետ համապատասխանություն ապահովելու նպատակով (ծանոթագրություն 24):

(ա) Համախմբման հիմունքներ

(i) Դուստր կազմակերպություններ

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող կազմակերպություններն են: Խումբը վերահսկողություն ունի կազմակերպության նկատմամբ, երբ կազմակերպությունում իր ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և կազմակերպության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումն սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

(ii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս բացառվում են ներխմբային հաշվարկների մնացորդներն ու գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը:

(բ) Հասույթ

(i) Վաճառված ապրանքներ

Հասույթը ճանաչվում է, եթե կա համոզիչ վկայության, սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, առ այն, որ պատվիրատուին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների ճանաչելի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերն ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հանած վերադարձումները, առևտրային զեղչերը և իջեցումները:

(ii) Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանին համաձայնորեն: Ավարտվածության աստիճանը գնահատվում կատարված աշխատանքների ուսումնասիրության հիման վրա:

(iii) Միջնորդավճարներ

Եթե գործարքում Խումբը հանդես է գալիս որպես գործակալ, այլ ոչ որպես՝ պրինցիպալ, ապա ճանաչված հասույթն իրենից ներկայացնում է Խմբի կողմից վճարված միջնորդավճարի գուտ գումարը:

(գ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսերը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը կամ վնասը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով :

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(դ) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի ու արտարժույթով արտահայտված և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Իրական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են դրամի իրական արժեքի որոշման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(i) Արտերկրյա ստորաբաժանումներ

Արտերկրյա ստորաբաժանումների ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ներկայացման արժույթի հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով: Արտերկրյա ստորաբաժանումների եկամուտները և ծախսերը փոխարկվում են ներկայացման արժույթի գործարքի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ներկայացվում են արտարժույթի փոխարկման պահուստում՝ սեփական կապիտալում:

(ե) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճարների միջոցով, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(զ) Ծախրահարկ

Ծախրահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Վճարման ենթակա ընթացիկ հարկը ներառում է նաև շահաբաժինների գծով առաջացող պարտավորությունները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Խումբը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Խումբը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

(է) Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը՝ մուտք, առաջինը՝ ելք»: սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(ը) Հիմնական միջոցներ

(i) Ծանաչում և չափում

Հիմնական միջոցները ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հիմնական միջոցների իրական արժեքների շարժից: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Խումբը փոխանցում է վերագնահատումից աճն ուղղակիորեն չբաշխված շահույթ՝ աճի իրացումից հետո: Աճի իրացումը կարող է իրականացվել ակտիվի օգտագործման միջոցով կամ վերջինիս օտարման պահին:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ հավանական է, որ Խումբը կհոսեն այդ ծախսման հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկն սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հոլատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն հետևյալն են.

- Հող և շենքեր 10-55 տարի
- Մեքենա-սարքավորումներ 1-10 տարի
- Փոխադրամիջոցներ 5-10 տարի
- Տնտեսական գույք 1-8 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

Հիմնական միջոցների միավորները վերագնահատելիս՝ ակտիվի հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է վերագնահատված գումարին համապատասխանելու համար: Վերագնահատման վերջում կուտակված մաշվածությունը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի դիմաց:

(թ) Ոչ նյութական ակտիվներ

Խմբի կողմից ձեռքբերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված անորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

(i) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ գուդվիլի և ապրանքային նշանների սեփական ուժերով ստեղծման գծով ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(ii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում սկսած այն պահից, երբ դրանք դառնում են մատչելի օգտագործման համար, քանի որ այս մեթոդն առավել ճշգրիտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն հետևյալն են.

- Լիցենզիաներ և ապրանքային նշաններ 1 տարի
- Հաշվապահական ծրագիր 5 տարի

Անորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ժ) Ֆինանսական գործիքներ

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ - ճանաչում և ապաճանաչում

Խումբը փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ֆինանսական ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Խմբի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվելով գուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Խումբն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Խումբն ունի հաշվանցում կատարելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Խմբի ու բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, վերջիններիս լուծարման կամ սնանկացման դեպքում:

Խումբը դասում է ածանցյալ ֆինանսական ակտիվները փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասին:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են ֆիքսված կամ որոշելի վճարումներով ակտիվներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Այս ակտիվներն ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են անորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասը ներառում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, բանկային ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցների մնացորդները, ընթացիկ բանկային հաշիվները և կանխիկը ճանապարհին:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ - չափում

Խումբը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկային օվերդրաֆտները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(iii) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(h) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի գծով ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել՝

- պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից,
- Խմբին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- պարտապանի սնանկացման հայտանիշները,
- փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները,
- տնտեսական պայմանները, որոնք կապված են պարտականությունների չկատարման հետ,
- դիտարկելի տվյալները, որոնք վկայում են ֆինանսական ակտիվների խմբից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազեցման մասին:

Անորոշիվացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Խումբը փոխառությունների և դեբիտորական պարտքերի արժեզրկման վկայությունը դիտարկում է թե՛ առանձին և թե՛ հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվների արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են՝ հաշվի առնելով դեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և պարտքային պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա պատմական տվյալներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի՝ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում և արտացոլվում է պահուստային հաշվում: Եթե Խումբը գտնում է, որ չկա ակտիվը վերականգնելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Խումբը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները գեղջի ծախսագրման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով՝ ակտիվները, որոնք չեն կարող ստուգվել անհատական հիմունքով, խմբավորվում են փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործումից առաջացնում են դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ դրամաստեղծ միավորներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստը համամասնորեն նվազեցնում է դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) այլ ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(լ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը գեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ձեռչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2016թ. հունվարի 1-ին սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և չեն կիրառվել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Խմբի գործունեության վրա: Խումբը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

(ա) Նախաձեռնություն տեղեկատվության բացահայտման հետ կապված (ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ)

Փոփոխությունները պահանջում են այնպիսի տեղեկատվության բացահայտում, որը թույլ կտա ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին գնահատել ֆինանսավորման գործունեությամբ պայմանավորված պարտավորությունների փոփոխությունները, ներառյալ՝ դրամական միջոցների հոսքերի փոփոխության հետ թե՛ կապակցված և թե՛ չկապակցված փոփոխությունները:

Փոփոխությունները գործում են 2017թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող են կիրառվել ժամանակից շուտ:

Բացահայտման նոր պահանջները բավարարելու նպատակով՝ Խումբը մտադիր է ներկայացնել պարտավորությունների ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ մնացորդների համադրումը՝ բացահայտելով ֆինանսավորման գործունեությամբ պայմանավորված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Չի ակնկալվում, որ փոփոխություններն էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(բ) ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացվող հասույթ»

ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է համապարփակ հիմունքներ, որոշելու համար, թե որ հանգամանքներում, ինչ չափով և երբ պետք է ճանաչվի հասույթը: Ստանդարտը փոխարինում է հասույթի ճանաչման ներկայումս գործող ուղեցույցները, ներառյալ՝ ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր» և ՖՀՄՄՄ Սեկնաբանություն 13 «Հաճախորդի հավատարմության ծրագրեր» ուղեցույցները:

ՖՀՄՍ 15 կգործի 2018թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:

Խումբը գնահատում է փոփոխությունների հնարավոր ազդեցությունն իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա: Ներկայումս Խումբը չի ակնկալում որևէ էական ազդեցություն:

(գ) ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014թ. հուլիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջնական տարբերակը: ՖՀՄՍ 9-ը կգործի 2018թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:

Խումբը դեռ չի վերլուծել նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա: